



«Փրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ

**«Դուստր Մարիաննա» սահմանափակ  
պատասխանատվությամբ ընկերություն**

Ֆինանսական հաշվետվություններ  
և անկախ աուդիտորական եզրակացություն  
2023 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԵՐԵՎԱՆ  
Մայիս 2024 թ.

## Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2023 թ. դեկտեմբերի 31-ին դրությամբ  
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2023 թ. դեկտեմբերի  
31-ին ավարտված տարվա համար

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2023 թ. դեկտեմբերի  
31-ին ավարտված տարվա համար

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 2023 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված  
տարվա համար

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ



Աուդիտորական ծառայությունների իրականացման փյունցիա ԱՕԸ N 1 20 0284  
 Տրված՝ 18.12.2020 թ. Չայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների  
 Պաշտոն հասարակական կազմակերպության խորհրդի թիվ 11ա որոշմամբ

«Փերֆեկթ Աուդիտ» ՍՊԸ

ՀՀ, ք.Երևան 0010

Տիգրան Մեծ 4

Հեռ. +374 10 524 724

www.perfectaudit.am

## ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ղեկավարությանը

### Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին աւարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում 2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին աւարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ):

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Մույն ստանդարտներով սահմանված մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների վարքագծի միջազգային ստանդարտների խորհրդի՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՎՄՄՎ վարքագիրը), և մենք կատարել ենք վարքագծի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն նշված պահանջների և ՀՎՄՄՎ վարքագրի: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր վերապահումով դրական կարծիքը արտահայտելու համար:



**Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու, անհրաժեշտության դեպքում՝ անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նվազագույն վերահսկողության համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ դիտարկված, զերծ են սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական հաշվետվություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, ինչը, սակայն, երաշխիք չէ, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումները, եթե այդպիսիք առկա են: Ֆինանսական հաշվետվություններում խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ ողջամտորեն կարելի է ակնկալել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև իրականացնում ենք հետևյալը.

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Դիտարկում ենք աուդիտին առնչվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, քայքայ ոչ կարծիք արտահայտել Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող տեղեկատվության բացահայտումների խելամուտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական հաշվետվությունում հղում կատարել ֆինանսական հաշվետվություններում ներկայացված համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևավորել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այսուհանդերձ, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կատարման օգակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող էական թերությունների մասին:

Եղվարդ Աբրամյան  
պատասխանատու աուդիտոր

Աղավնի Բարսյան  
Տնօրեն-բաժնետեր, տ.գ.թ.

«Փըրֆեկթ Աուդիտ» ՍՊԸ

Մայիս 23, 2024 թ.



*[Handwritten signatures in blue ink]*



**ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐԹԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**«Դուստր Մարիանա» ՍՊԸ**

2023թ. դեկտեմբերի 31-ին  
ավարտվող տարվա համար

հազար դրամ

Ցուցանիշի անվանումը	ձևքզ	31.12.2023թ.	31.12.2022թ.
<b>Շարունակվող գործունեությունից</b>			
Հասույթ	4.1	14,735,165	15,578,874
Վաճառքի ինքնարժեք	4.2	-10,194,888	-11,432,912
Համախառն շահույթ (վնաս)		<b>4,540,277</b>	<b>4,145,962</b>
Այլ եկամուտներ	4.3	176,745	71,434
Վարչական ծախսեր	4.4	-450,123	-492,131
Այլ ծախսեր	4.5	-1,631,673	-1,970,837
Ֆինանսական ծախսեր	4.6	-1,392,721	-1,359,111
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		<b>1,242,505</b>	<b>395,317</b>
Շահութահարկի գծով ծախս	4.7	(283,363)	(269,897)
Տարվա շահույթ(վնաս) շարունակվող գործունեությունից		<b>959,142</b>	<b>125,421</b>
Ընդհատված գործունեության զուտ շահույթ (վնաս)			
Ընդամենը տարվա շահույթ (վնաս)		<b>959,142</b>	<b>125,421</b>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունքներ		<b>959,142</b>	<b>125,421</b>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2024 թվականի ապրիլի 15-ին



S. Վարդանյան

Յ. Մելքոնյան

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**«Դուստր Մարիանա» ՍՊԸ**

2023թ. դեկտեմբերի 31-ին  
դրությամբ

հազար դրամ

<b>ԱԿՏԻՎ</b>	Ներք	31.12.2023թ.	31.12.2022թ.
<b>1. Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	4.8	10,926,176	10,415,697
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ		1,943,893	1,467,514
Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ		1,001,469	273,869
Ոչ նյութական ակտիվներ	4.9	37,932	32,615
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	4.10	550,221	916,005
Հետաձգված հարկային ակտիվ		5,159	4,687
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>14,464,851</b>	<b>13,110,387</b>
<b>2. Ընթացիկ ակտիվներ</b>			
Պաշարներ	4.11	2,790,024	5,665,210
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4.12	2,849,604	2,891,120
Ընթացիկ շահութահարկի գծով կանխավճար			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4.13	2,924,840	134,910
Այլ ընթացիկ ակտիվներ			
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>8,564,468</b>	<b>8,691,239</b>
Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ			
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ</b>		<b>23,029,319</b>	<b>21,801,626</b>
<b>ՊԱՍԻՎ</b>			
<b>1. Մեփական կապիտալ</b>			
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումար	4.14	400,050	100,050
Կուտակված շահույթ		-1,201,566	-1,845,088
Մեփական կապիտալի այլ տարրեր		8,496,121	8,102,857
<b>Ընդամենը մեփական կապիտալ</b>		<b>7,694,605</b>	<b>6,357,819</b>
<b>2. Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>			
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	4.15	13,949,067	13,054,493
Հետաձգված հարկային պարտավորություններ			
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>13,949,067</b>	<b>13,054,493</b>
<b>3. Ընթացիկ պարտավորություններ</b>			
Կարճաժամկետ վարկեր	4.16	0	623,341
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4.17	1,296,056	1,578,860
Շահութահարկի գծով պարտավորություն		60,929	161,073
Պահուստներ	4.18	28,662	26,040
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>1,385,647</b>	<b>2,389,315</b>
Օտարման խմբում ներառված որևէ կանոնադրված դրամական արժեքով պարտավորություններ			
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԿԱՆ ԵՎ ՉԸՆԹԱԳԻԿ ԿԱՊԻՏԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ</b>		<b>23,029,319</b>	<b>21,801,626</b>



S. Վարդանյան  
Գ. Մելքոնյան



ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Դուստր Մարիաննա» ՍՊԸ

2023թ. դեկտեմբերի 31-ին  
ավարտվող տարվա համար

հազար դրամ

I. Նախորդ տարի (ժամանակաշրջան)

Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ (վնաս)	Սեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը
100,050	(1,970,509)	7,064,726	5,194,267
100,050	(1,970,509)	7,064,726	5,194,267
	125,421		125,421
		1,038,131	1,038,131
100,050	(1,845,088)	8,102,857	6,357,819

II. Ընթացիկ տարի (ժամանակաշրջան)

100,050	(1,845,088)	8,102,857	6,357,819
	169		169
100,050	(1,844,919)	8,102,857	6,357,988
	959,142		959,142
	(315,789)		(315,789)
300,000			300,000
		393,264	393,264
400,050	(1,201,566)	8,496,121	7,694,605

Տ. Վարդանյան

Հ. Մելքոնյան





**Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**  
**«Դուստր Մարիաննա» ՍՊԸ**

2023թ. դեկտեմբերի 31-ին  
 ավարտվող տարվա համար

հազար դրամ

<b>Հոդվածի անվանումը</b>	<b>31.12.2023թ.</b>	<b>31.12.2022թ.</b>
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից մուտքեր	15,916,201	17,468,730
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր	11,835	13,132
<b>Ընդամենը մուտքեր</b>	<b>15,928,036</b>	<b>17,481,862</b>
Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով ելքեր	5,224,504	6,557,066
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով ելքեր	1,533,605	1,469,206
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	524,715	529,916
Վճարումներ բյուջե	1,398,338	628,862
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	2,148,225	8,847,620
<b>Ընդամենը ելքեր</b>	<b>10,829,387</b>	<b>18,032,670</b>
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>5,098,649</b>	<b>-550,808</b>
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքի գծով	788,749	9,420
Կանոնադրական կապիտալի համալրում	300,000	
<b>Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր</b>	<b>1,088,749</b>	<b>9,420</b>
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	2,145,849	1,542,792
<b>Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր</b>	<b>2,145,849</b>	<b>1,542,792</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>-1,057,100</b>	<b>-1,533,372</b>
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից		
Ստացված վարկերից և փոխառություններից	2,440,046	4,199,800
<b>Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր</b>	<b>2,440,046</b>	<b>4,199,800</b>
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	3,542,048	2,058,816
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	308,053	64,223
<b>Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր</b>	<b>3,850,101</b>	<b>2,123,039</b>
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>-1,410,055</b>	<b>2,076,761</b>
<b>Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>2,631,494</b>	<b>-7,419</b>
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	158,436	-91,214
Դրամական միջոցների մնացորդ տարվա սկզբին	134,910	233,542
<b>Դրամական միջոցների մնացորդ տարվա վերջին</b>	<b>2,924,840</b>	<b>134,910</b>



Տնօրեն

Գլխ. Հաշվապահ

Տ. Վարդանյան

Հ. Մելքոնյան